

մանի աղագիսի բարդ ու ծանր վեճերի մեջ, կհերադասի շրջանցել, լուծության տալ բարդ հարցերը:

Քամրազյանը գրել է հանդամանալից մեհադրություն, որի մեջ ոչ միայն շիրվանզադեադիությունը բարձրացված է նոր աստիճանի:

Նի ալի ճիշտ են լուծված կամ դրված հայ գլխահանության պատմության համար կարևորագույն բազմաթիվ հարցեր:

Վ. ՊԱՐՏԻՉՈՒՆԻ

Բանասիրական գիտությունների
դոկտոր-պրոֆեսոր

Հ. Ս. ԱՆԱՍՅԱՆ, *Հայկական մատենագիտություն. Ե—ԺԳ՝ դղ., հատոր Ա, Հայկական ՍՍՌ ԳԱ Հրատարակչություն, 1959, XCV+1227 էջ, գինը 3 ռ.:*

Գրախոսվող աշխատությունը խոշոր երևույթ է հայ մատենագիտության պատմության մեջ, նյութերի ընդգրկման ծավալով՝ կատարյալը անցյալում լույս տեսած բոլոր տիպի մատենագիտություններից: Երկար տարիների համառու տրեւաջան աշխատանքի արդյունք հանդիսացող այս գործը, որն ընդգրկելու է բազմաթիվ հատորներ, իրավամբ կարելի է համարել հայ հին մատենագրության հանրագիտարանը:

«Հայկական մատենագիտության» առաջին հատորը բովանդակում է Ա տառով սկսվող հայկական ինքնուրույն և թարգմանական գրական հուշարձաններն ու հեղինակները և ավարտվում Առաքել Սալաձորեցի մատենագրի նվիրված հոդվածով: Հատորը բաղկացած է շուրջ 100 ներածական ամբողջական էջերից և 1828 սյունակային էջերից: Բացի ընդարձակ ներածականից, գրքում տեղ են գտել նաև մատենագիտական բնագրերի, ինչպես նաև ձեռագրացուցակների բաժիններ, որոնց հաջորդում է լույս աշխատությունը՝ «Հայկական մատենագիտություն»: Հատորն ունի հավելվածային, ինչպես նաև բնագրերի բաժիններ: Վերջում բերված է բնագրերի սկզբնատողերի այբբենական ցանկը:

Գրքի ներածականում հեղինակը խոսում է հայ ինքնուրույն և թարգմանական գրականության ունեցած ազդյունաբերական խոշոր նշանակության մասին ոչ միայն հայագիտության, այլև համաշխարհային գիտության համար, ապա կանգ առնում հայ մատենագիտության պատմության վրա: Այս կապակցությամբ ուշադրով է հետևյալ ճշտումը: Մինչև այժմ հայ մատենագիտության պատմության սկիզբը համարվում էր XIX դարի վերջը, իսկ նրա հիմնադիրները՝ մխիթարյան նշանավոր հայագետներ Գ. Զարպհանալյանն ու Ա. Ղազիկյանը: Հ. Անասյանը, հիմնվելով ցարդ շուտամիասիրված բազմաթիվ ձեռագրական տվյալների վրա, տպացուցում է, որ հայ մատենագիտությունը

սկսվում է V դարից: Հեղինակը հանդամանորեն զրադվում է հայ մատենագիտության ամենահին նմուշներով, որոնք հայտնի են «Կանոնական գրքերի ցուցակներ» և «Անկանոն գրքերի ցուցակներ» անուններով: Հիշյալ ցուցակները կազմվել են պաշտոնական եկեղեցու կողմից՝ աղանդավորների ստեղծած գրականությունը արգելելու նպատակով: Արժեքավոր է Գրիգոր Արասյանի «Գիրք պատճառաց»-ի նկարագրությանն ու վերլուծությանը նվիրված հատվածը: Ներածականում ուսումնասիրվում են նաև շարականների ու պատմագրերի վերաբերյալ հնագույն ցուցակները, ապա հանրագումարի են բերված XIX դարում տպագրված հայ մատենագիտական բոլոր երկերը, որոնք բաժանված են մի շարք խմբերի: Ա խմբում հեղինակը դասում է այն գործերը, որոնց ծրագիրը եղել է դասավորել ու ներկայացնել հայ մատենագիտության ինքնուրույն ու թարգմանական գործերը: Բ խմբը այն գրքերն են, որոնք նվիրված են տպագրված հայերեն գրքերին: Գ խմբում մտնում են հայ պարբերական մամուլում լույս տեսած հոդվածները նկարագրող ցուցակները: Դ խմբի մեջ մտնում են հայագիտական բնույթ ունեցող հայերեն և օտար լեզուներով հրատարակված աշխատություններն ու հոդվածները: Եվ, վերջապես, Ե խմբը ձեռագրերի մատենագիտությունն է, այսինքն՝ ձեռագրացուցակները:

Գրքի ներածականին հաջորդող «Մատենագիտական բնագրեր» բաժնում (էջ XXXIX—LXXVI) զետեղված են ձեռագրերից և տպագիր աշխատություններից բաղկացած 25 ցանկեր, որոնք կարևոր արժեք են ներկայացնում ինչպես հայ մատենագիտության պատմության, այնպես էլ հայ բանասիրության համար: Նկատի ունենալով, որ ցանկերը մեզ են հասել մի քանի ձեռագիր օրինակներով, հեղինակը հրատարակել է նրանց հա-

մեծատական բնագրերը, տողատակին ցույց տալով տաշրերությունները՝ ևյս բաժնում հրատարակվել են աղանդավորական հասարկած մի շարք «արգելված» գրքերի, «արտաքին» և «նուրբ» կոչված գրքերի, հայ մատենագիրների, օտար պատմագիրների, եկեղեցական մատենագիրների, մեկնիչների, շարականների հեղինակների, հայոց ժողովների պատմիչների վերաբերյալ ցանկերը։ Բնչպես իրավացի կերպով նշում է հեղինակը, հիշյալ ցանկերը, մեր մատենագիտության պատմության ամենահին աղբյուրները լինելուց բացի, կարևոր տվյալներ են պարունակում նաև կորսության մատնված պատմական մի շարք աշխատությունների հեղինակների ինքնության որոշման, ինչպես նաև մատենագրերի աղավաղված անունները ճշտելու տեսակետից։

Երօրի սկզբում զետեղված է «Ճեղքագրացուցակներ» բաժինը (էջ LXXVII—XCV), որտեղ ի մի են բերված 5 և ավելի ձևագրեր նկարագրող ցուցակները, ինչպես նաև անտիպ ձևագրացուցակներից միայն առավել կարևորները։ Պետք է նշել, որ այս ուղղությամբ կատարված առաջին փորձը պատկանում է պրոֆ. Լ. Մելիքսեթ-Քեկին, որը 1939 թ. Թրիփսիում հրատարակեց հայերեն ձևագրացուցակների մի ընդհանուր ցանկ, որտեղ գրանցված են 54 անուն ձևագրացուցակներ։ 1957 թ. Բուխարեստում Հ. Ճ. Սիրունին ֆրանսերեն լեզվով հրատարակեց նույն տիպի մի այլ ցուցակ, որտեղ գրանցված են 68 անուն ձևագրացուցակներ։ Ներկա հատորում զետեղված ձևագրացուցակների ցանկը ամենաընդարձակն է։ Նրանում ընդգրկված են 178 տպագիր և անտիպ ձևագրացուցակներ։ Վերջում զետեղված են այբբենական ցանկեր՝ հեղինակների և հրատարակիչների և այն անձանց, որոնց սեփականությունը կազմող ձևագրերը նկարագրված են հիշյալ ցուցակներում։ Գիրքը ունի նաև ցանկ այն վայրերի, որտեղ գտնվող ձևագրերը նկարագրված են դարձյալ նույն ցուցակներում։ Անհրաժեշտ ենք գտնում լրացման կարգով մեջ բերել մի քանի տպագիր և անտիպ ձևագրացուցակների անուններ, որոնք տեղ չեն գտել Հ. Անասյանի ներկա աշխատությունում։ Տպագրվածների շարքին անհրաժեշտ ենք դրսևում ավելացնել հետևյալ գործերը, որոնց մեջ զետեղված են նաև ձևագրացուցակներ և կամ ձևագրերի հիշատակարաններ։ 1. Արտաշես Հ. Գարտաշյան. «Նիթեր Նգիպտոսի Հայոց պատմության համար», Լ., Բազիրե, 1943, էջ 80—91 (նկարագրում է Կահիրեի հայոց առաջնորդարանի մատենադարանի 11 գրչագիրներ, 9 կոնդակներ և այլն)։ 2. Ս. Հայկունի. «Բագրևանդ Ջրարաշի դատառ», մասն Լ., էջ 160—201 (Ջանազան էջերում մանրամասն նկարագրել է մի քանի ձևագրեր, իսկ 369—384 էջերում՝ Թավրիզից 11 ձևագրեր է նկարագրել)։ 3. Արշակ Ալպոյաճյան, «Պատմություն Եղոկիոյ հայոց», 1952, Կահիրե (էջ 1565—1622, «Հայ գրչագիրներ» բաժնում մեջ է բերում Եղոկիայում գրված 85 ձևագրերի հիշատակարաններ)։ 4. Ղ. Ալիշան, «Կամենից տարեգիրք հայոց Լեհաստանի և Ռումինիոյ», Վենետիկ, 1896, էջ 160—201 (մեջ է բերում Լեհաստանում և մասամբ Ռումինիայում գրված 100 ձևագրերի հիշատակարաններ)։ 5. Գարեգին արքեպ. Հովսեփյան, «Խաղբակեանք կամ Պոռչեանք հայոց պատմության մեջ», հատոր Գ, Նյու-Յորք, 1942/3, էջ 89—182, հավելված Բ (բերված են 91 ձևագրերի հիշատակարաններ)։ 6. Մ. Տ., «Ազգային ձևագրեր ի Պաղատառ», «Հանդէս Լեւոնիայ», 1889 թ., դեկտ., էջ 269—270 (նկարագրել է 6 ձևագիր)։ 7. Գեորգ Ս. Սարաֆյան, «Պատմություն Անթիպի հայոց», հատոր Բ. Լոս-Անջելես, Գալիֆորնիա, 1953, էջ 413—449 (Գր. Պողարյանը «Այնթապի հայերէն գրչագիրներ» գրություն համառոտ նկարագրել է 35 ձևագրեր)։

Անտիպ մնացած ձևագրացուցակներից, ինչպես գրում է Հ. Անասյանը, ընդգրկված են «միայն առավել կարևորները», բայց թերություն պետք է համարել, որ չկան հետևյալ անտիպ ցուցակները։ 1. Տիգրան Սավալանյանի 1875 թ. կազմած Երուսաղեմի հայոց Մատենադարանի 1950 ձևագրերի համառոտ ցուցակը։ 2. Սահակ Բ. Կաթողիկոսի (Խաչապյան) Երուսաղեմի հայոց Մատենադարանի 3000 ձևագրերի ընդարձակ գիտական ցուցակը։ 3. Վերջինիս կազմած Հալեպի ցուցակը։ Լյս երեք ցուցակները ներկայումս պահվում են Երուսաղեմի հայոց Մատենադարանում։ 4. Վահրամ Եպիսկոպոս Մանկունիի կազմած էջմիածնի ձևագրերի հիշատակարանների ցուցակը (պահվում է Փարիզի Նուպարյան Մատենադարանում 153 համարի տակ)։ 5. Հ. Մ. Պոտուրյանի ձևագրերի հիշատակարանների ժողովածուն (պահվում է Վենետիկի Միսիթարյանների Մատենադարանում)։ 6. Տրդատ Եպիսկոպոս Պալյանի «Ցուցակ հայերէն ձևագրաց Ս. Գանիլի վանուց ի Կեսարիա»-ն։ 7. Հ. Ն. Ալիշանի «Հաւարումն Յիշատակարանաց» մեծ ժողովածուն, որտեղ մտնում են էջմիածնի, Երուսաղեմի, Հ. Մ. Պոտուրյանի, Բեղամ էֆենդիի (Տարոն), Թոփճյանի (Արմաշ), Ս. Տեր-Ավետիսյանի (Նոր Զուղա) և մի շարք այլ հավաքածուների հիշատակարանները։ 8. Վերջինիս կազմած ձևագրացուցակների ճոխ հավաքածուն, որտեղ մտնում են էջմիածնի, այժմ Զմմառ փոխադրված՝ Կ. Պոլսի Որմա-

րևոյի Անտոնյան Միարանության 200 ձեռագրերի, Ողիպտոսի և այլ վայրերում պահվող ձեռագրերի ցուցակները՝ 9. Հ. Հ. Ոսկյանի՝ «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մխիթարեան Մատենադարանի», Վիեննա (Հ. Տաշյանի ցուցակի շարունակությունը)։ Վերջին էրեք ցուցակները գտնվում են Վիեննայի Մխիթարյանների մոտ։ 10. Փառեն Լախակոպոս Մելքոնյանի՝ Կիւրուի հայերէն ձեռագրերի ցուցակը։ 11. Շարութչուն Բյուրտյանի «Միացյալ Նահանգաց զանազան հաստատութեանց և հաւարմանց հայերէն ձեռագրաց ցուցակը»։ 12. Վերջինիս անձնական մատենագրանոցում գտնվող հայերէն ձեռագրերի ցուցակը։ 13. Սիրարփի Տեր-Ներսեսյանի, Զէսթրը Բիտիի (Գուրլին—Խոլանգի) ձեռագրերի ցուցակը։ 14. Գր. Դաւիթբաշյանի՝ Հյուսիսային Իտալիայի մատենադարանների հայերէն ձեռագրերի ցուցակը։ 15. Վ. Միսրճյանի թերթի թողած Հոռմի վատիկանյան և այլ գրադարաններում պահվող հայերէն ձեռագրերի ցուցակը և այլն։

Հ. Անասյանի «Հայկական մատենագիտությունը» բնագրերում է հայագիտության ամենատարբեր բնագավառները, պատմություն, հոգեվոր և աշխարհիկ գրականություն, փիլիսոփայություն, թերապևտիկություն, ձշգրիտ գիտություններ, երաժշտություն, բժշկություն, կանոնական և իրավաբանական գրականություն, իրատարանություն և առականագրություն, գիւտական ու կրոնական գործերին նվիրված մեկնողական գրականություն, վարքաբանական և դավանաբանական գրականություն, թարգմանական գործեր, հայ հեղինակների գործեր՝ գրված այլ լեզուներով և այլն, և այլն, մի խոսքով նրանում ուսումնասիրվում է հայ հնադարյան մշակույթի ողջ գրավոր ժառանգությունը։

Աշխատության հեղինակն օգտագործել է հայկական աֆրոդե տպագիր գրականությունը՝ սկսած 1512 թվականից, XIX և XX դարերում քննական ուսումնասիրությունների մեջ հրատարակված մատենագրական նյութերը, հայ և օտար պարբերական մամուլում լույս տեսած մատենագրական հոդվածները և, վերջապես, հրատարակված և անտիպ ձեռագրացուցակների ձեռնոց մասը։ Բնագրային մասում հիմնականում օգտագործված է Երևանի Մատենադարանի ձեռագրերի հարուստ հավաքածուն։

«Հայկական մատենագիտություն» ողջ նյութը շարադրված է աշխարհական կարգով, աշխինքի հանրագիտարանային ձևով։ Դրբի յուրաքանչյուր հոդվածը նվիրված է մի հեղինակի, մա-

տենագրական մի երկի և կամ որևէ առարկայի։ Զետեղված հոդվածները կազմված են հետևյալ սկզբունքներով։ Տեղեկատու բաժնում տրվում են անհրաժեշտ տեղեկություններ ու գնահատականներ հեղինակի և նրա երկերի մասին։ Այստեղ Հ. Անասյանը հանդես չի գալիս միայն փաստերը հավաքողի և արձանագրողի դերում, այլ հարցերին ցուցաբերում է ինքնուրույն մոտեցում, անխոչ պրպտումների շնորհիվ մերժում կամ քննադատում է այս կամ այն հարցի շուրջն արտահայտված տեսակետները կամ էլ առաջ քաշում բոլորովին նոր տեսակետ։ Ապա հաջորդում է բնագրային բաժինը։ Նախ տրվում է բնագրի վերնագիրը, հետո՝ սկզբնատողը և ապա ցույց է տրվում, թե տվյալ բնագիրը ո՞ր հրատարակության և կամ ձեռագրի մեջ է գտնվում։ Այնուհետև ժամանակագրական կարգով բերվում են տվյալ բնագրի տարբեր հրատարակությունները։ Բնագրերի վերաբերյալ բերված են նաև տեղեկություններ նրանց ունեցած բնագրագիտական առանձնահատկությունների մասին։ Ցույց է տրված, թե տվյալ հրատարակությունը ի՞նչ ձեռագրերի հիման վրա է կատարված և կամ ի՞նչ տարբերություններ ունի նախորդ հրատարակությունների հետ համեմատած։ Սրան հաջորդում է տվյալ բնագրի աշխարհով մեկ ցրված ձեռագրերի ցանկը։ Հաճախ բերվում են նաև բնագրերի հիշատակարանները, բովանդակության ցանկերը, նրանց աշխարհաբար և օտար լեզուներով թարգմանությունների ցանկը։ Վերջում՝ գրականության բաժինն է, որտեղ ցույց են տրվում ինչպես ինքնուրույն հետազոտությունների, այնպես էլ հայերեն թարգմանությունների վերաբերյալ ուսումնասիրությունները։ Մեջ են բերված նաև հիշատակված ուսումնասիրությունների մասին պարբերական մամուլում լույս տեսած գրախոսականները։ «Օժանդակ գրականություն» անվան տակ ուսումնասիրողը կարող է գտնել յուրաքանչյուր հոդվածի հետ առնչվող բնականորեն բնույթի մի շարք անհրաժեշտ աշխատությունների անուններ։ Նկատի ունենալով այն հանգամանքը, որ անցյալում լույս տեսած աշխատություններում օգտագործվել են էջմիածնի ձեռագրերի հնագույն համարները, որոնք արդեն վաղուց ենթարկվել են փոփոխման, հեղինակը հին համարներին կից, ուսումնասիրողների գործը հիշտացնելու նպատակով, նշել է նաև Երևանի Մատենադարանում պահվող հիշյալ ձեռագրերի նոր համարները։

Գրքում քիչ չէ նաև կատարված բնագրային ճշտումների թիվը։ Հեղինակը ոչ միայն ուղղել է գրչական հայտնի սխալները (տե՛ս, օրինակ, էջ 515, Անուրոն վանանդիկ)։ Մատենադարանի

1. Լույս է տեսել 1958 թ. Գուրլինում, անգլերենը։ Ստացվել է գրախոսվող աշխատությունը լույս տեսնելուց հետո։

№ 1885 ձևագրից մեջբերումներ կատարելով, ուղղել է բնագիրը, տողատակին նշելով ձևագրում եղած սխալները, այլև ցույց է տվել Նեղինակների անունների ճիշտ ձևը: Միաժամանակ նշված են նաև տվյալ անվան զանազան ձևագրերում կրած բազմապիսի աղավաղումները: Այսպես, Ամկլախոս Նեղինակի անունը, բոտ Անասյանի, ձևագրերում հանդիպում է 14 տարբերակներով (էջ 646):

Կարևոր նշանակություն ունի նաև մի քանի մատենագիրների անունների ճշգրտումը: Այսպես, Ազգլ անվան կապակցությամբ (էջ 231—232) Նեղինակը նկատում է. «Այս անունով մասնագետաց է ենթադրել Հ. Տաշյանը, հիմնվելով Վիեննայի Միթարյանների Մատենադարանի № 537 ձևագիր տաղարանում գտնվող մի տաղի վրա», որի տների սկզբնատառերը կազմում են «Ազգլ»-ը: Անասյանը Տաշյանից վերցրել է այդ անունը և հրատարակել իր «Անհանունների բառարանի» Ա հատորում (էջ 47): Հ. Անասյանին հաջողվել է երևանի Մատենադարանի № 3263 ձևագրում գտնել հիշյալ տաղի Նեղինակի անունը, որ Ավետիք է, իսկ տների սկզբնատառերը տալիս են «աիգլ», որը ոչ թե անձնանուն է, այլ պատահականորեն կազմված մի հնչյունաշար: Կան նաև այլ անունների արժեքավոր ստուգարանություններ:

Հ. Անասյանը քանասիրությամբ բացահայտել է նաև մի շարք անտիպ և տպագիր աշխատությունների տարբեր խմբագրություններ: Օրինակ՝ X! դ. մատենագիր Անանիա Սանահնեցու կամ Հաղրատեցու «Ընդդիմ երկարակաց...» աշխատության երեք (էջ 777—782) և «Ալեքսիանոս կամատր աղբատ» վարրի 8 տառերի խմբագրությունները (էջ 405—413):

Բնագրերի օգտագործումը դյուրացնելու առաւելուից գրախոսվող աշխատությունը ունի մեկ այլ առավելություն ևս. ձևագիր և տպագիր ընդարձակ աշխատություններից բերված են նույնիսկ գլուխների ցանկեր, իսկ անտիպ գործերի ցանկերում ցույց են տրված նաև, թե տվյալ ձևագրի որ էջից է սկսվում նշված գլուխը: Այդպես է վարվել Նեղինակը, օրինակ, Արու Սալիդ (XII դ.) բժշկի մարդակազմության վերաբերյալ աշխատության գլուխների ցանկում (էջ 69), երեք անտիպ ախրապատիկների առնչությամբ (էջ 469—476) և այլուր: Մակայն, դժբախտաբար, մի շարք անտիպ ձևագրերի նկատմամբ այդ գովելի նախաձեռնությունը չի կիրառվել:

Հ. Անասյանը առանձին հոդվածներ է նվիրել նույնիսկ փոքր հատվածներով հայտնի Նեղինակներին: Այսպես, նա կանգ է առել Ապափանոս կամ Ապլվեոս (Ապլվերոս) Նեղինակի

վրա, որից միայն երկու համառոտ հատվածներ է բերել Ստեփաննոս Սյունեցին իր «Վասն անպականութեան մարմնոյն» ճառում: Նեղինակի աչքից չեն վրիպել նույնիսկ նամակներում պահպանված այս կամ այն փոքր տեղեկությունները մինչև այժմ անհայտ աշխատությունների մասին: Այդպիսին է, օրինակ, Պիղոսի և Գալանոսի այժմ կորած «Բնարանութիւն, այսինքն ֆիզիկա» աշխատությունը, որի գոյության մասին մի տեղեկություն է պահպանվել Նահաջ Վարդան Հունանյանի կողմից Միթար Սերաստացուն գրած նամակում: Կամ նից, 20 հնվ., 1707 թ. (էջ 420): Այս կապակցությամբ անհրաժեշտ ենք գտնում անել Նետեյալ լրացումը, 1960 թ. Ռումինիայի Գեոլա հայրազարի շրջանային թանգարանում պահված հայերեն ձևագրերում տեսանք նաև Կղմեոս Խալանոսի Նետեյալ գործը, «Բնաստասիրական փճարանութիւնը ոմանը, որը պատկանին առգիտութեան մետաֆիսիկային, որ թարգմանի համարնարանութիւն, շարակարգեալը ի կարգի Թէատիկոսոց Կ(-)ղմեոս աստուածարան վարդապետը» (Գեոլայի ձեռ. № 15, հին համար՝ 49): Այս ձևագիրը, անկասկած, վերահիշյալ կորած համարված աշխատության մի մասը պետք է լինի:

Արժեքավոր են գրախոսվող աշխատության այն էջերը, որոնք մի շարք մատենագրական նորություններ են պարունակում: Այս կապակցությամբ առաջին ներթին պետք է հիշատակել V! դ. հայ նշանավոր գիտնական Անանիա Շիրակացուն նվիրված ընդարձակ հոդվածը, որտեղ ոչ միայն ի մի է հավաքված նրա մասին եղած ընդարձակ գրականությունը, այլև Նեղինակին հաջողվել է առաջին անգամ բանասիրության ուղղությունը բեկել մեծ գիտնականի երկու անտիպ տոմարագիտական աշխատությունների վրա (էջ 743—744): 1. «Անանիայ Շիրակացւոյն համարողի յազգս Թ և Ժ երեկաց լուսնի», որը գտնվում է երևանի Պետական Մատենադարանի № 2001 ձևագրի 213 ա և բ էջերում: Սույն արժեքավոր երկը մուծված է եղել «Յաղագս թուոյ Հոռոմոյեցոց» կամ «Յաղագս թուականին Հոռոմոց» խորագիրը կրող տոմարագիտական բնագրի անանուն հայ խմբագրի աշխատության մի ընդօրինակության մեջ: 2. «Լուսնացոյց», որը պահվում է Վատիկանի Մատենադարանի հայերեն ձևագրերից մեկում (№ 76): Անանիա Շիրակացու կապակցությամբ անհրաժեշտ ենք համարում նշել, որ Հ. Անասյանը դեռևս 1954 թ. իր «Բուզանդարանի սուտերեն թարգմանությունը» (ապակետիպ) աշխատության մեջ (էջ 8—9) մատնացույց էր արել Ան. Շիրակացու Զատիկ ճառում գտնվող այն ուղղակի փաստը,

րուտ որի «Անանուն ժամանակագրությունը» իրոր Շիրակացու հեղինակությունն է և հեղինակի կողմից անվանվել է «Ժամանակական կանոն»:

Հետաքրքրական է նաև տոմարագետ Ազարիա Ջուղայեցուն նվիրված հոդվածը: Մինչև այժմ նրա ինքնությունը հայտնի չի եղել: Ն. Ակինյանը այն կարծիքն է հայտնել, թե «Ազարիայի տոմար»-ի հեղինակը Ազարիա Սասնեցին է, որին «Ջուղայեցի» են կոչել՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ նրա տոմարը գործածության մեջ է եղել պարսկահայերի մոտ: Անասյանը Մատենադարանի № 799 ձեռագրում հայտնաբերել է Ազարիա Ջուղայեցու ինքնագիր անտիպ աշխատությունները, որոնք հրատարակել է հատորի հավելվածում: Այս նորահայտ նյութերից պարզ է դառնում, որ Ազարիան ապրել ու գործել է XVI դ. առաջին կեսում, Հին Ջուղայում: Նա իր հիշատակարանում տեղեկություններ է տալիս նաև իր ծնողների և նախնիների մասին: Ինչպես հայտնի է, նրա անունով «Ազարիայի տոմար» է կոչվել հայոց «Փոքր տոմարը», որը սկսվել է 1616 թ. Հովհաննես Սարկավազի տոմարից հետո՝ Վերոհիշյալ նյութերը վկայում են, որ դեռևս XVI դ. կեսին այդ տոմարը արդեն կիրառության մեջ է եղել, թեև հավանական է, որ նա սոսկ տեղական բնույթ ունենալու Անասյանի աշխատության այդ էջերը հիմք են տալիս մեր տոմարագետ գիտնականներին պարզելու այն խրնդրով, «թե գիտական ինչպիսի պահանջների և սործնական կյանքի ինչպիսի պայմանների հետևանք էր «Ազարիայի տոմարի» երևան գալը ժ.Ձ դարի կեսերին Հին Ջուղայի շրջանում...» (էջ 275):

Գանձասարի միաբան Աբրահամ Շաբեցու (էջ 139—142) և Տաթևի միաբան Աբրահամ Տաթևացուն (էջ 142—144, 1168—1169) նվիրված հոդվածներում Անասյանը պատմաբանների ուշադրություն է հրավիրում նրանց անտիպ նամակների վրա: Առաջին հոդվածը կարևոր տվյալներ է բովանդակում Գանձասարի կաթողիկոսական աթոռի կացության, տիրող տնտեսական և սոցիալական դրության մասին, իսկ երկրորդը՝ նյութեր է հաղորդում Տաթևի և Ագուլիսի Թովմաս առաքյալի վանքերի պատմության վերաբերյալ: Ուշագրավ են նաև հայ հեղինակ Ազարիա Ֆրիդոնի (XVI—XVII դդ.) 1604 թ. Հոռոմում տպագրված «Relatio de statu ecclesiarum Armeniae» («Հաղորդագրություն Հայաստանի եկեղեցիների կացության մասին») գրքից բերված կարևոր տեղեկությունները Արևելյան Հայաստանի Գողթան գավառի մասին (էջ 284—285):

Կարևոր նշանակություն ունեն հեղինակի կողմից կատարված մատենագիտական մի շարք ճշգրտումները: Նշենք դրանցից մեկը. Գ. Զարայանյանի և Կ. Կրումրախերի տված տեղեկությունների համաձայն Հոռոմում պահվող ձեռագրերում պետք է լինեին Անաստաս Սինայեցու «Հոդեգոս»-ի հայերեն թարգմանությունը: Անասյանը, ուսումնասիրելով այս հարցը և հիմնվելով է. Տեղայի աշխատության վրա, պարզել է, որ այդ տեղեկությունները սխալ են. տվյալ ձեռագրում ոչ թե «Հոդեգոս»-ի հայերեն թարգմանությունը կա, այլ նրա հունարեն բնագիրը (էջ 825): Նա պարզել է նաև, որ տպագրված համարված մի շարք գրքեր իրականում լույս չեն տեսել: Երևենք մի օրինակ. Գ. Պատկանյանը հիշում է 1835 թ. Վենետիկում լույս տեսած Ազաթանգեղոսի լատիներեն մի թարգմանության հրատարակության մասին (տե՛ս Կ. Ս. Պատկանյան, «Библиографический очерк армянской исторической литературы», Петербург, 1879, էջ 28): Քննության առնելով հիշյալ տեղեկությունը, Անասյանը այն համարում է թյուրիմացության արդյունք. այդ հրատարակությունը Ազաթանգեղոսի հայերեն բնագրի վենետիկյան 1835 թ. տպագրության առավելագույն արձագանքն է (էջ 174):

«Հավելված»-ում (1163—1176) մի շարք կարևոր լրացումներ են կատարված գրքում ընդգրկված հոդվածների վերաբերյալ: Ներկա հատորը փակվում է բնագրերի սկզբնատողերի ցանկով (1189—1227), որը հնարավորություն է տալիս պարզելու բազմաթիվ խառն խորագրեր ունեցող բնագրերի ինքնությունը:

Այժմ մի քանի լրացումներ:

Արդարյան հայտնի գրույցի կապակցությամբ հեղինակը մեջ է բերել Մովսես Խորենացու մոտ գտնվող և Արդարին վերագրվող 7 նամակները (էջ 3): Մեզ ծանոթ է նաև Տիրերիոս կայսրի մի այլ անվավեր հրովարտակր ուղղված «Առ Արևար արքային Հայոց», որով տեղեկացնում է, որ Պիղատոսը իր մոտ է և մահվան է դատապարտվելու: Մինևույն ժամանակ Տիրերիոսը Արդարին հրամայում է, որպեսզի նա զորքով արշավի Սրուտաղեմի վրա և պատմի Քրիստոսին խաչող հրեաներին: Հիշյալ առասպելը չի մտել Խորենացու պատմության մեջ: Այն տպագրված է հետևյալ գրքում. «Գիրք գրգուկա այս պատմի նախ վասն դալստեանն Յիսուսի Երուսաղեմ: Երկրորդ վասն շարշարանացն որ կրեաց առաջի Պիղատոսի դատաւորի և Քահանայապետիցն Աննայի և Կալիստիայ: Ինտացեալ երանելոյն Յակօբայ տեառն եղբօրն... Եւ ի յամբ փրկչին Ռէ Է Ը Ժ-ին (1710) և հայոց ՌՃՊԹ-ին

(1159—1710) ի մայրաքաղաքի Կոստանդնուպոլիս» (էջ 109—110)։ Այդ գրությունը մեզ հայտնի է նաև Մատենադարանի Ա 5 ձեռագրից, որը թողնվածու է և գրված է 1733 թ. (էջ 144ր—145ա)։

Գրախոսվող աշխատության մեջ գրված է, որ Պիզուի «Breve relatione dello stato...» իտալերեն պատմական հիշատակարանը չի հրատարակվել (էջ՝ 420)։ Մինչդեռ այն լույս է տեսել N. Jorga-ի «Studii si documente» աշխատության I—II միացյալ հատորում, Բուխարեստ, էջ 429—431, no. XXIII, Հիշյալ փաստաթուղթը վերաբերում է ոչ միայն լեհահայերի պատմությանը, ինչպես գրել է Անասյանը, նրանում կարևոր տվյալներ կան նաև Մուղղովայի հայերի անցյալի մասին։ 1669 թ. պապական նվիրակ Պիզուին, որը Մուղղովա էր եկել հայերին կաթոլիկ դարձնելու հույսով, վերոհիշյալ գործում հիշատակում է, որ Մուղղովայի հառց եպիսկոպոսության իրավասության տակ էին գտնվում Արքեմանի, Տիգինայի, Իսմայիլի, Գալացի, Սիրեսի, Խոտինի, Վասուլյի, Բուտեշանի, Սուշավայի, Յաշի հայերի։ Տեղեկություններ է տալիս նաև տեղի հայկական հուշարձանների թվի և հնության մասին։ Վավերագրի բնագիրը պահվում է Մյունխենի մատենադարանում։

Այլի անվավեր հրովարտակի (էջ 414—417) մասին անհրաժեշտ ենք գտնում ավելացնել, որ Բուխարեստի «Հայ մշակույթի տան» մատենադարանում գտնվում է Սուլթան Աբդուլ Մեջիդի (1839—1861) 1840 թ. մայիսի 3-ին Ալեքսանդր հայերին տրված թուրքերեն հրովարտակի՝ Հրովարտակից տեղեկանում ենք, որ հիշյալ վայրի բնակիչները Արդուլ Մեջիդին ցույց են ավել զանազան վավերագրեր, որոնցից երևում է, որ նրանց նախնիներից հայ մի վիրարույթ ազատել է Այի ամիրապետի (656—661) կյանքը։ Ինչպես վիրարույթին, այնպես էլ նրա հետնորդներին Ային ազատել էր ըստ հարկերից։ Նույն վավերագիրը հաստատվել էր նաև Սուլթան Մուրադ Դ-ի կողմից (1622—1640)։ Վերահիշյալ հրովարտակում Սուլթան Մեջիդը կրկին հաստատել է այն և Ալեքսանդր բնակիչներին ազատել հարկերից։ Այդ վավերագիրը կարևոր արժեք ունի նաև հայ բժշկության պատմության համար (տե՛ս H. dj. Siruni, «Un chirurg armean in secolul VII-lea» Anuarul Ani՝ 1941, București, թթ. 229—242)։ Այլի վերաբերյալ մի ուսումնասիրություն ունի նաև Հայկ Պերպերյանը (տե՛ս «Հասկ հայագիտական տարեգիրք», Կ տարի, 1957, Անթիլիաս, էջ 103—109)։

Ամիրգովաթի «Անգիտաց անպետ»-ի չափածո հիշատակարանի (էջ 662) կապակցությամբ

ցանկանում ենք մեջ բերել նաև հետագա տողերը, որոնք դուրս են մնացել գրախոսվող աշխատությունից, սակայն կարևոր տվյալներ են բովանդակում այն մասին, թե հեղինակը բանի տարի է աշխատել այս գործի վրա և երբ է այն ավարտել։

«Ե (4) տարի զտիւ եւ գիշեր աշխատեցայ
Բ րադում աւրինակից յաւարտի սայ
Գ ծողին եւ շինողին՝ ո՛վ որ կարգայ,
Ողորմի Քրիստոս որ ասէ, թէ Հայր մեղայ,
Որ ի բանս այլ պակաս իրք չի մնայ
Փառք բեզ, Տեր, Հայոց թուականն՝ լՄՆԱՅ
($L=30+U=200+N=400+K=1+3=300-931-501=1482$)։ Այսպիսով, պարզվում է, որ Ամիրգովաթի իր «Անգիտաց անպետ»-ը գրել է 1482 թ. (տե՛ս Կ. Հ. Բասմաջյան, Ամիրտովաթի ամասիացույ Անգիտաց անպետ, Վիեննա, 1927, էջ 623—624)։

Հ. Անասյանը ընթերցողին ծանոթացնում է նաև մի շարք նորահայտ թարգմանական երկերի հետ։ Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում մի բանի թարգմանված և արդեն իսկ տպագրված երկերի ավելի հին թարգմանությունների հայտնաբերումը։ Այդ շարքից է Ալրերտ Մեծի «Համառոտ հաւարում...» երկի հին թարգմանության առայժմ միակ ծանոթ հատվածը XIII—XIV դդ. գրչությանը։ Բերված են նմուշներ հին և երկրորդ թարգմանություններից (էջ 400)։ Մյուսը՝ Անտոն Գովտինի Փիլիսոփայության մի այլ թարգմանություն է, որը տարբեր է մխիթարյան ՎրՅ. Ասկերյանի հրատարակածից (1750—1751 թթ.) և հանդիսանում է Ղուկաս Խարբերդցու անտիպ թարգմանությունը, որի ձևագիրը հաստատվում է ներանի և Սրուսաղեմի մատենադարաններում (էջ 963—964)։ Գովտինի մասին անհրաժեշտ ենք գտնում անել հետևյալ լրացումը. 1948 թ. Ռուսինիայի Եղիշարենթուպոլիս (ռումիներեն՝ Դումբրովեն) հայաքաղաքի մայր տաճարի վերնատանը գտնվող մատենադարանում տեսանք նաև Անտոն Գովտինի աշխատության մի այլ թարգմանությունը, որը անտիպ է և տեղ չի գտել գրախոսվող գրքում։ Թարգմանությունը կատարվել է Վ. Ասկերյանից առաջ 1724—1728 թթ. դարձյալ Վենետիկում, հունգարահայ մխիթարյան Թեոփիլոս Վ. Մեղիաշցու կողմից։ Թարգմանությունը կադմված է ըստ հատորներից և բնագրվում է 2362 ձևագիր էջ։ Ահա այդ թարգմանության առաջին հատորի խորագիրը. «Փիլիսոփայություն րոտ անադարտելեաց և ապահովագունեղից ուսուցմանց սրբոյն Թոմայի ղոճիգայն, ղֆիղիգայն, ղրարոյականն և ղմեթաֆիղիկայն ի ըստ հատորոց պարունակույ։

Շարադրեցեալ ի հօրէ Զրայ Անդօնիոսէ Կովտինեան Լէմովիշնացոց կարգին քարոզողաց սրբազանի աստուածարանութեան վարդապետէ և փիլիսոփայութեան դասատուէ ի Համալսարանի սրբոյն Թօմայի Ագուինացոյ. և յամի տեառն 1724 թարգմանեցեալ ի լատինական լեզուէ ի հայկական բարբառ, աշխատասիրութեամբ Վ. Թևոգորոս վարդապետ Մետիաշացոյ. Հատոր և ի Վենետիկ Զլոծիգային պարունակող»:

Հեղինակը ցույց է տվել բնագրերի բոլոր հրատարակությունները, սակայն լավ կլինե՞նթե տպագիր հրատարակությունները նշելիս:

փոխանակ գրելու «այլ տպագրություն», համարակալեր դրանք, մի բան, որը կօգնե՞ր արագորեն իմանալու, թե տվյալ էջում նշված աշխատությունը քանիերորդ տպագրությունն է:

«Հայկական մատենագիտություն», դրժ-րախտարար, զուրկ է անձնանունների, տեղանունների և առարկայական ցանկերից: Կարծում ենք, որ երկրորդ հատորում տեղ կգտնեն ինչպես այդ, այնպես էլ նախորդ հատորի հասուկ անունների, տեղանունների և առարկայական ցանկերը:

Ս. ՔԱԼԱՆՋՅԱՆ

А. Н. АГАХИ, *Распространение идей марксизма-ленинизма в Иране* (до второй мировой войны), Издательство АН Азерб. ССР, Баку, 1961, стр. 252, ц. 1 р. 05 коп.

Ա. Ն. ԱԳԱՀԻ, *Մարքսիզմ-լենինիզմի գաղափարների տարածումը Իրանում* (մինչև համաշխարհային երկրորդ պատերազմը), Ադրբեյ. ՍՍՄ Գիտությունների ակադեմիայի Հրատ., Բաքու, 1961, 252 էջ, գինը 1 ռ. 05 կոպ.:

Դրախոսվող աշխատությունը բաղկացած է երկու գլխից. առաջին գլուխը, որն ընդգրկում է մինչև Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռեվոլյուցիան ընկած ժամանակաշրջանը, վերնագրված է «Մարքսիզմ-լենինիզմի գաղափարների ներթափանցումը Իրան»։ Երկրորդ գլուխը, որն ընդգրկում է 1917 թ. մինչև երկրորդ համաշխարհային պատերազմն ընկած ժամանակաշրջանը, վերնագրված է «Մարքսիզմ-լենինիզմի գաղափարների տարածումը Իրանում»:

Դրքում տրված է Իրանում մարքսիստական գաղափարների տարածման պատմությունը, պարսիկ կոմունիստների աշխատություններում շոշափված երկրի ներքին և արտաքին կյանքին վերաբերող բազմաթիվ հարցերի մարքսիստական լուսարանումը:

XIX դարի վերջին և XX դարի սկզբին, երբ կապիտալիզմը վերաճեց իր բարձրագույն ստադիային՝ իմպերիալիզմին, Իրանը փաստորեն վերածվեց իմպերիալիստական Անգլիայի և ցարական Ռուսաստանի կիսագաղութի: Հենց այդ շրջանում էր, որ երկրում տեղի էին ունենում ֆեոդալական տնտեսության քայքայումը և կապիտալիստական հարաբերությունների ձևավորումը: Ազգային բուրժուազիայի և նրան զուգահեռ՝ բանվոր դասակարգի աճը տեղի էր ունենում օտարերկրյա գաղութարարների և ֆեոդալական իշխողների դեմ Իրանի ժողովուրդների մղած պայքարի պայմաններում:

1905—1911 թթ. իրանական բուրժուական ռեվոլյուցիան 1905 թ. ռուսական ռեվոլյուցիայի առաջին արձագանքն էր Արևելքում: Մահմադական այդ շարժումը, որը խոշոր առաջին թագ էր երկրի սոցիալական կյանքում, բարենպաստ հող ստեղծեց սոցիալիզմի գաղափարների ներթափանցման համար: Միանգամայն ճիշտ է նշում հեղինակը, որ «եթե մինչև XX դարի սկիզբը Ռուսաստանի առաջավոր մտածողների ռեվոլյուցիոն-դեմոկրատական գաղափարները ազդեցություն էին թողնում Իրանում պրոգրեսիվ հասարակական մտքի զարգացման վրա, ապա քաղաքական պայքարի մեջ ռուսական պրոլետարիատի մուտքով և հատկապես առաջին ռուսական ռեվոլյուցիայի ժամանակից սկսած մարքսիզմ-լենինիզմի ազատարար գաղափարները սկսեցին մուտք գործել Իրան և ռեժնշել նրա ժողովուրդներին՝ ազատության, դեմոկրատիայի և ազգային անկախության համար մղված պայքարում»:

Հեղինակը մեծ տեղ է տալիս իրանական տարերթիկ բանվորության դերին, Իրանի այն քայքայված գյուղացիության, արհեստավորների և բանվորների դերին, որոնք գալիս էին Անդրկովկաս՝ ապրուստի միջոց հայթայթելու համար: 1904 թ. միայն Բաքվում իրանցի այդ բանվորները կազմում էին Բաքվի ամբողջ բանվորության մոտ 22 տոկոսը: Պաշտոնական տվյալների համաձայն, 1911 թ. Իրանից Ռուսաստան են մեկնել 192,767 բանվորների Այդ